Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, ուստի հայցի բավարարման պայմաններում Դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ինչ վերաբերում է 400.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանական ծառայությունների համար նախատեսված գումար բռնագանձելու պահանջին, ապա Դատարանը փաստում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի ծախսը վճարում է նրան ներգրաված գործին մասնակցող անձը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ 2-րդ մասի համաձայն՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության ծախսեր են համարվում նաև փաստաբանական կազմակերպություններին վճարված կամ վճարման ենթակա գումարները, իսկ 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված ծախսերի փոխհատուցման չափը որոշելիս Դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

Այսպես, «Ն.Ա.Ն. Խումբ» ՍՊԸ-ի և «Ցենտռա Կոլ» ՍՊԸ-ի միջև 16.02.2023 թվականին կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ Ի-23/02 պայմանագիրը, ծառայությունների գինը սահմանվել է 400.000 ՀՀ դրամ:

Վերը նշված իրավակարգավորումների հիման վրա հաշվի առնելով սույն գործի բարդությունը, փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը՝ Դատարանը գտնում է, որ այն խելամիտ և ողջամիտ է մասնակի, հետևաբար պատասխանողներ «Մեծամոր համայնքի լուսավորություն և կանաչապատում» ՀՈԱԿ-ից և ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, իսկ մնացած մասով պահանջը ենթակա է մերժման:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ դատական ծախսեր առկա չեն, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ցենտռա Կոլ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Մեծամոր համայնքի լուսավորություն և կանաչապատում» ՀՈԱԿ-ի, ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի՝ որոշումն ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

2. Ոչ իրավաչափ և անվավեր ճանաչել թիվ ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.02.2023 թվականի թիվ 2 արձանագրային որոշումը՝ «Ցենտռա Կոլ» ՍՊ ընկերության հայտը 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու մասով:

3. «Մեծամոր համայնքի լուսավորություն և կանաչապատում» ՀՈԱԿ-ից և ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովից հօգուտ «Ցենտռա Կոլ» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաև 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

3.1. Փաստաբանի խելամիտ վարձատրության բռնագանձման վերաբերյալ պահանջը մնացած մասով մերժել:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**